

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՄԱՐԱՆ



ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԾՐԱԳԻՐ

# ԼՈՒՍԱՆԿԱՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

**ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԾՐԱԳԻՐ**

**ԼՈՒՍԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2019**

ՀՏԴ 77(091)  
ԳՄԴ 85.16  
L 960

*Հրատարակության և երաշխավորել  
ԵՊՀ պատմության ֆակուլտետի  
գիտական խորհուրդը:*

**Կուրս՝ 2-րդ,**  
**Կիսամյակ՝ 2-րդ,**  
**Կրեդիտ՝ 3,**  
**Ժամաքանակը՝ 32,** որից  
**Գասախոսություն՝ 32** ժամ, դասընթացը վերջանում է եզրափակիչ ամ-  
փոփմամբ:  
**Կազմեց՝ Ի. Թաշարյան**

L 960 Մագիստրատուրայի ծրագիր: Լուսանկարչության պատմու-  
թյուն/ Կազմեց Ի. Թաշարյանը: Եր., ԵՊՀ հրատ., 2019, 40 էջ:

Ծրագրում ներկայացված են համաշխարհային և հայկական լու-  
սանկարչությունը, վերջինիս նշանակությունը, տեղն ու դերը հայկական  
արվեստում: Առարկայում անդրադարձ է կատարվում լուսանկարչական  
տեխնիկային, համաշխարհային և հայ անվանի լուսանկարիչներին,  
ներկայացվում են վերջիններիս ստեղծագործական շարքերը և ոճական  
առանձնահատկությունները:

Ուսումնական ծրագիրը նախատեսված է արվեստաբանների,  
պատմության և մշակույթի պատմության մասնագետների, հայագետ-  
ների, ուսանողների համար:

ՀՏԴ 77(091)  
ԳՄԴ 85.16

ISBN 978-5-8084-2369-5

© ԵՊՀ հրատ., 2019

© Կազմողի համար, 2019

## **Քացատրական մաս**

### **Նպատակը**

Դասընթացի **նպատակն է** ուսումնասիրել համաշխարհային և հայկական լուսանկարչության պատմությունը:

### **Խնդիրը**

Դասընթացի **խնդիրներն են՝**

- ուսանողներին ծանոթացնել լուսանկարչության հայտնագործության և նրա հիմունքներին,
- ծանոթացնել լուսանկարչական արվեստի պատմության պարբերացմանը,
- սովորեցնել արվեստագիտական վերլուծության հերթափուլերը և մեթոդները,
- տարբերակել փաստավավերագրական և գեղանկարչական ձևերը, տեսակները և ժանրերը, դրանց համապատասխանող տեխնիկաները և նյութերը,
- ճանաչել առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները,
- ուսանողներին ծանոթացնել հանրահայտ լուսանկարիչներին և նրանց գործունեությանը:

### **Գաղափարը**

Դասընթացի **հիմնարար գաղափարները** վկայում են լուսանկարչության արվեստի հիմունքներին, լուսանկարչության հայտնագործողներին, լուսանկարչության զարգացման ուղիների վերլուծությանը:

## **Հասկացությունը**

Դասընթացի հիմնական **հասկացություններն են՝** «լուսանկարչության պատմություն», «լուսանկարչական տեխնիկա», «լուսանկարչական արվեստ», «լուսանկարչական արվեստի տեսություն», «լուսանկարչական արվեստի քննադատություն», «գեղարվեստական լուսանկարչություն», «դագերտիպ», «թալբոթատիպ», «դիմանկար», «բնանկար», «նատյուրմորտ», «ձև», «ոճ», «ուղղություն», «հեռանկար», «անհատական ձեռագիր», «լույս ու ստվեր», «դիտակետ», «խորք»:

Դասընթացը հիմք է ուսումնառության հաջորդ տարիների ընթացքում հայ և համաշխարհային լուսանկարչության պատմության առանձին փուլերի ուսումնասիրության համար:

## **Կրթական արդյունքները**

Դասընթացի ավարտից հետո ուսանողները լուսանկարչական որևէ գործ դիտելիս **կկարողանան՝**

- ճանաչել և տարբերակել լուսանկարի ստեղծման ժամանակը, տեխնիկան, տեսակը և ժանրը,
- բնութագրել ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները,
- գնահատել լուսանկարիչների գործունեությունը:

## **Մեթոդական ցուցումներ**

**Դասընթացի կազմակերպման ձևը** դասախոսություններն են: Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը **դասախոսությունն է**, որի ընթացքում ուսանողներին մատուցվում է տվյալ դասաժամին վերաբերող տեսական նյութը՝ զուգահեռաբար ցուցադրելով լուսանկարներ: Առանձին թեմաներ ուղեկցվում են տեսանյութերի դիտու-

մով: Առանձին պարապմունքներ իրականացվում են լսարանից դուրս:

Մեկ դասընթաց անց է կացվում Մատենադարանում, որտեղ ուսանողների և դասախոսի ակտիվ երկխոսության, քննարկման միջոցով ամրապնդվում են լսարանային դասերի ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքները: Այս ընթացքում ուսանողներն իրավունք ունեն հղելու իրենց հուզող հարցերը և ստանալու դրանց պատասխանները: Այսօրինակ գործնական դասընթացների նպատակն է դասախոսությունների ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքի հիման վրա պրակտիկ գիտելիքի հաղորդումը:

### **Ուսանողի թղթապանակը**

**Ուսանողի թղթապանակը** մեթոդական հնարք է, որն ընդգրկում է կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած աշխատանքը: Այն բաղկացած է՝

- Առաջին ընթացիկ քննություն, որը բաղկացած է բանավոր հարցումից: Թեմաներն ընտրում են ուսանողները՝ ըստ դասախոսությունների ընթացքում յուրացրած թեմաների և ենթաթեմաների բովանդակության: Ուսանողներն ազատ են առաջադրվող թեմաներից որևէ մեկի ընտրության հարցում՝ դրանք չկրկնելու պայմանով:
- Երկրորդ ընթացիկ քննություն, որը բաղկացած է գրավոր ռեֆերատից: Թեմաներն առաջադրվում են դասախոսի կողմից: Ռեֆերատները բանավոր ներկայացվում են լսարանում: Բանավոր ներկայացումը թույլ է տալիս ակտիվ քննարկում կազմակերպել դասընթացի ընթացքում յուրացրած տեսական հարցերի վերաբերյալ:

## **Գնահատման և ստուգման մեթոդը**

Կիսամյակի վերջում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշվում է եզրափակիչ բանավոր հարցման միջոցով:

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները՝**

- **առաջին՝ բանավոր և երկրորդ՝ ռեֆերատի հարցում** - յուրաքանչյուրը՝ 4 միավոր, առավելագույնը՝ 8 միավոր:
- **եզրափակիչ բանավոր քննություն** - հարցատոմսն ընդգրկում է երկու տեսական հարց (յուրաքանչյուր հարցի արժեքը՝ 2.5 միավոր, առավելագույնը՝ 5 միավոր) և մեկ գործնական հարցադրում՝ տասը ստեղծագործությունների ճանաչողություն (հարցի արժեքը՝ 2 միավոր): Բանավոր եզրափակիչ հարցման մեջ են ներառված նաև ուսանողական թղթապանակի գնահատումը՝ 3 միավոր, որից՝ ռեֆերատի համար՝ 1 միավոր, սեմինարի գրավոր հարցում և արտալսարանային դասերի վերաբերյալ ինքնուրույն աշխատանքներ՝ 2 միավոր), և ուսանողների մասնակցությունը դասերին ամբողջ կիսամյակի ընթացքում (2 միավոր):

Այսպիսով՝ ուսումնական դասընթացի արդյունքում ուսանողի ձեռք բերած գիտելիքը կարող է գնահատվել առավելագույնը 20 միավոր:

**Դասընթացի թեմատիկ բովանդակությունն ըստ ժամաքանակի**

|    |   |  |
|----|---|--|
|    | <b>ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ</b>   | <b>ԴԱՍԱ-<br/>ՎԱՆԳ-<br/>ՄԱՆ<br/>ԺԱՄԵՐԻ<br/>ՔԱՆԱԿԸ</b> |
|    |   | <b>Դասախոսություն</b>                                |
| 1. | <b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ:</b> Լուսազգայնության երևույթը, լույսի ամրագրումը: Լուսանկարչության ծագման և զարգացման խնդիրները  | 2 ժամ  |
| 2. | <b>ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:</b> Լուի Դագերի և նկարիչ Շառլ Բուտոնի համագործակցությունը Փարիզում: Գիորամայի առանձնահատկությունները: Դագերի և Նյեպսի համագործակցությունը. մարդիկ, որոնց շնորհիվ աշխարհը տեսավ լուսանկարչությունը         | 2 ժամ  |
| 3. | <b>ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ:</b> Ստորջրյա լուսանկարչություն: Օդային լուսանկարչություն: Սպիրիտուալ լուսանկարչություն: Կինոարվեստ: Լուսանկարչության պարբերացումը: Լուսանկարչության ժանրերը: Լուսանկարչության նվաճումները | 2 ժամ  |
| 4. | <b>ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ, ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ՉԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ:</b> Լուսանկարչական սարքերի կառուցվածքը: Լուսանկարչական ապարատների զանգվածային արտադրությունը (Կոդակ  | 2 ժամ  |



|    |   |       |
|----|---|-------|
|    | №1, Լեյկա, Քենոն, Կոմսոմոլ, Կիև, Ջենիֆ, Նիկոն, Կոնիկա)  |       |
| 5. | ՓԱՏԱՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ: Լուսանկարը՝ որպես այցեքարտ: Հայոց ցեղասպանությունը վավերացնող լուսանկարիչները   | 2 ժամ |
| 6. | ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Պրեռաֆայելիտների խմբավորումը: Ակնթարթային լուսանկարներ (Էնդի Ուորհոլ): Լուսանկարչական ռեալիզմը կամ հիպերռեալիզմը: Քեմադրված լուսանկարներ (Վարդգես Մուրենյանց)  | 2 ժամ |
| 7. | 19-21-ՐԳ ԳԱՐԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՍՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ: Նադար (1820-1910 թթ.), Էդուարդ Շտեյխեն (1879-1973 թթ.), Գորոքեա Լանջ (1895-1965 թթ.), Ալֆրեդ Շթիգլից (1864-1946 թթ.), Յուրի Մեչխոով (ծնվել է 1950 թվականին), Ջուլիա Մարգարետ Քեմերոն (1815-1879 թթ.), Ռիչարդ Ավեդոն (1923-2004 թթ.), Ֆրանցիսկո Ինֆանտե Արանա (ծնվել է 1943 թվականին): Համառոտ ակնարկ մի խումբ հանրահայտ լուսանկարիչների մասին | 6 ժամ |
| 8. | ՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐԸ: Աբդուլլահյան եղբայրներ, Պողոս Թարթուլյան, Եսայի Կարապետյան և այլք  | 8 ժամ |
| 9. | ՊԱՐՄՎԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԸ 19-20-ՐԳ ԳԱՐԵՐՈՒՄ: Անթուան Սևրուզին (1851-1933 թթ.) և այլք   | 2 ժամ |

|     |  |       |
|-----|--|-------|
| 10. | <b>19-21-ԲԳ ԳԱՐԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԸ:</b> Յուսուֆ Քարշ (1908-2002 թթ.), Իդա Քար (1908-1974 թթ.), Արա Գյուլեր (ծնվել է 1928 թվականին), Մարիամ Շահինյան (1911-1996 թթ.): Նախախորհրդային և խորհրդային տարիների լուսանկարչությունը, Անդրանիկ Քոչար (1919-1984 թթ.), Նեմրուք Բաղդասարյան (1907-1988 թթ.), Գագիկ Հարությունյան (ծնվել է 1946 թվականին), Գերման Ավագյան (ծնվել է 1962 թվականին) | 2 ժամ |
| 11. | <b>ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄՏՔԵՐԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ</b>   | 2 ժամ |
|     | <b>ԸՆԳԱՄԵՆԸ</b>  | 32    |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արվեստի դաստիարակչական էությունը և հասարակական նշանակությունը: Լուսանկարչության հայտնաբերման նախապատմությունը: Ներդաշնակ գեղեցկության որոնումները: Պատկերների ստեղծման և պահպանման ընթացք՝ լուսային կամ այլ էլեկտրամագնիսական ճառագայթների գրանցման միջոցով: Պահաժամի ընթացքում մարմինների կողմից արձակված կամ անդրադարձրած լույսի ճառագայթները պահպանվում են լուսազգայուն մակերեսի (ժապավեն, թուղթ կամ հիշողության ֆիզիկական կրիչներ՝ սենսոր) վրա: Լուսազգայնության երևույթը, լույսի ֆիքսումը: Երբ, որտեղ և ինչու է «հայտնագործվել» լուսանկարչությունը: Լուսանկարչության ուսումնասիրման աղբյուրները: Լուսանկարչության ծագման և զարգացման առանձնահատկությունները, նախադրյալներն ու խնդիրները: Լուսանկարչության տեղն ու դերը եվրոպական ու արևելյան երկրներում: Պատմության ընթացքը, մշակույթը, արվեստը, լուսանկարչության պահանջը և նրա ստեղծագործական մարմնավորումը (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Կանադա, Ռուսաստան, Պարսկաստան, Եգիպտոս, Վրաստան): Լուսանկարչությունը և հասարակությունը: Լուսանկարչությունը՝ որպես հասարակական գիտակցության հատուկ ձև. աշխարհընկալումը և արվեստը: Ժամանակային և տարածական արվեստները: «Լուսազգայուն», «մեխանիկական վերատադրելիություն», «ակնթարթային լուսանկարչություն», «կոնտրաստային լուսաստվեր» տերմինների նշանակությունը:

Լուսանկարչության յուրահատկությունն ու կառուցվածքային տարբերություններն արվեստի այլ տեսակներից:

Լուսանկարչություն քառի համարժեքը՝ «photography» (հուն. *phōtos*՝ լույս և *γραφή*՝ գծային պատկերում, նկարչություն), և կիրառումը տարբեր ժամանակներում ու վայրերում: Սըր Ջոն Հերշելի Լոնդոնի թագավորական միությունում կարդացած դասախոսությունը (1839 թ. մարտի 14-ին): Նույն թվականի փետրվարի 25-ին գերմանացի աստղագետ Յոհան ֆոն Մեդլեռի կողմից լուսանկարչության բա-

նի կիրառումը (գերմանական «Վոսիշե Ցայտունգ» (Vossische Zeitung) քերթում հրատարակված հոդվածը):

Արևի լույսի օգտագործման դրական և բացասական կողմերը (լուսանկարչի կախվածությունն արևի լույսից): Արհեստական լույսի օգտագործման դրական և բացասական կողմերը (Լույսի լիիրավ տնօրինողը: Լույսի աղբյուրները):

Լուսանկարի քիմիական նախապատմությունը: Արխատտելի պատկերացումները կամերա-օբսկուրայի գործառույթների մասին: Կամերա-օբսկուրայի հիշատակումը Լեոնարդո դա Վինչիի գրավոր աղբյուրներում: 19-րդ դարի գիտնականների ուսումնասիրությունները լուսանկարչության բնագավառում (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա): Գիտնականների հետազոտությունների արդյունքները՝ Ժոզեֆ Նիսեֆոր Նյեպսը, Լուի Դագերը և Ֆոքս Թալբոթը:

Լուսանկարչության ստեղծմանը նպաստող հայտնագործությունները:

1. Օբյեկտիվ: Առաջին օբյեկտիվի ստեղծման պատմությունը (1812 թ., Մենիսկ): Մեկ դրական ոսպնյակով ստեղծված օբյեկտիվի կիրառումը:

2. Արծաթի հայտնագործումը որպես լուսազգայուն նյութ:

3. Քիմիական մշակումը (երևակման ընթացքը):

## **ԹԵՄԱ Ա. ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ներածություն, լուսանկարչության պատմության ուղին իր շրջաններով, տեխնիկական նվաճումներով և զարգացումով.

1839-1860 թթ. - Դագերի և նկարիչ Շառլ Բուտոնի համագործակցությունը Փարիզում: Դիորամայի առանձնահատկությունները:

Ամենավաղ լուսանկարչական մեթոդի հայտնագործումը: Ժոզեֆ Նիսեֆոր Նյեպսի (1765-1833 թթ.) գյուտը՝ հելլոգրաֆիան:

Դագերոտիպը՝ որպես լուսանկարչական երևակման մեթոդ: Կատարման տեխնիկան: Անհրաժեշտ պայմանները: Կատարման նյութը, եղանակը, ոճը: Դագերոտիպյան մեթոդով ստացված լուսանկարի որակը: Լուսանկարի բազմացման բացակայությունը դագերոտիպյան մեթոդում:

\*\*\*\*\*

- 1851-1882 թթ. - Կոլլոդիոն մեթոդը՝ որպես յուրահատուկ լուսանկարչական երևակում (նեգատիվ և պոզիտիվ): Կատարման տեխնիկան: Անհրաժեշտ պայմանները: Կատարման նյութը, եղանակը, ոճը: Լուսանկարների տպագրությունը սպիրտային լուսանկարչական թղթի վրա:

- 1878-1882 թթ. - Չոր բրոմարծաթային ժելատինե շերտերի գործածությունը: Ֆոտո- և կինոնյութերի հիմնական տեսակը, եղանակը, ոճը: Կատարման տեխնիկան: Անհրաժեշտ պայմանները:

Նեգատիվ-պոզիտիվային երևույթ, հելիոգրաֆիա, ֆալթոթատիպային լուսանկարներ, կոլլոդիոնյան, դագերոտիպային լուսանկարներ, նրանց առանձնահատկությունները, հնարավորություններն ու կատարելագործումը, քիմիա-լուսանկարչական և օպտիկա-մեխանիկական գիտություն, պատկերի ամրագրումը, կանոնի խնդիրը լուսանկարչության մեջ: Կամերա-օբսկուրա: Լուսանկարչության արդյունաբերական զարգացումը, լուսանկարչության կիրառումը գիտության տարբեր ասպարեզներում /բուսաբանություն, կենսաբանություն, աշխարհագրություն, աստղագիտություն, երկրաբանություն և այլն/:

**ԹԵՄԱ Բ. ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԸ  
ԵՎ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ**

Ոճը՝ որպես գեղարվեստական սկզբունքների, կերպարի ստեղծման արտահայտչամիջոցների, ստեղծագործական հնարանքների միասնություն: Ոճի զարգացման երեք փուլերը. վաղ, հասուն և ուշ շրջանների ոճերի հաջորդականությունը: Տարբեր ոճերի զուգահեռ գոյության հնարավորությունը: «Ուղղություն», «գեղարվեստական դպրոց» և «անհատական ձեռագիր» հասկացությունների բովանդակությունը: Լուսանկարչության ժանրային և ենթաժանրային դասակարգման սկզբունքը: Ժանրերի ձևավորումը և զարգացման ընթացքը: Պատմական ժանր: Բնանկարի ժանր: Կենցաղային ժանր: Նատյուրմորտ: Անիմալիստական ժանր: Դիմանկարի ժանր (հոգեբանական դիմանկար): Ֆոտոժուռնալիստիկա: Նյութ ժանր (մերկ մարմնի լուսանկարում): Թեմատիկ պատկեր: Պլենեռային (բացօթյա) լուսանկարչություն: Հիպերռեալիզմ կամ լուսանկարչական ռեալիզմ:

Յուրաքանչյուր ժանրի ձևավորումը և զարգացման ընթացքը:

Լուսանկարչության քննադատումը ֆոտոռեալիզմի շրջան: Լուսանկարչական տեխնոլոգիաների համարձակ փորձարկումները և գեղարվեստական տարբեր եղանակների կիրառումը: Լուսանկարչության բոլոր գործող ուղղությունների ինքնուրույնությունը և անկախացումը: Նոր ժանրերի ի հայտ գալը: Լուսանկարչի հեղինակային մտքի առաջնահերթությունը: Լուսանկարչի գեղարվեստական ճաշակի գնահատումը: Լուսանկարչության ներթափանցումը կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

**ԹԵՄԱ Գ. ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՊԱՐԱՏՆԵՐԻ  
ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ  
ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Լուսանկարչական մասնագիտական ենթաճյուղեր (ստերեոսկոպիկական լուսանկարչություն, գոլոգրաֆիա, ռենտգենոգրաֆիա, միջուկային լուսանկարչություն):

Համաշխարհային լուսանկարիչների ընկերակցությունները (Ֆրանսիացի լուսանկարիչների ընկերակցություն /Ֆրանսիա/, Թագավորական լուսանկարչական ընկերակցություն /Անգլիա/): 19-րդ դարի լուսանկարչությանն առնչվող ամսագրեր, դասախոսություններ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, համաժողովներ, միջազգային համագումարներ, գիտաժողովներ, կոնգրեսներ /Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, Ճապոնիա, Կանադա, ԱՄՆ/:

Լեռնարդո դա Վիելին և ֆոտոապարատի նախատիպը (camera obscura, լատ.՝ մութ խցիկ): Վիլյամ Հայդ Ուոլաստոնի կողմից ստեղծված կամերա լուչիդան (camera lucida, լատ.՝ լուսավոր խցիկ) և ոսպնյակների կատարելագործումը: Փայտյա ապարատներ, մետաղական կադապարով ապարատներ:

Լուսանկարչական ապարատների զանգվածային արտադրությունը (Կողակ №1, Լեյկա, Քենոն, Կոնսումոլ, Կիև, Չենիթ, Նիկոն, Կոնիկա):

Լուսանկարչության պատմության մեջ Ջորջ Իստման Կողակի տեղը և դերը (1889 թ.): Գալարակի տեսքով ֆոտոժապավենի ստեղծումը Ջորջ Իստման Կողակի կողմից: Հատուկ ժապավենների համար նախատեսված լուսանկարչական սարքի ստեղծումը:

Գունավոր լուսանկարի ստեղծումը, նախապատմությունն ու զարգացումը: Գունավոր լուսանկարի համար նախատեսված սկավառակների թողարկումը: Գունավոր լուսանկարչությունն ու Լյումիեր եղբայրները (1904 թ.):

Շարժման տեսողական պատրանքի ստեղծման սկզբունքը: Կինեմատոգրաֆիայի հայտնագործումը: Կինեմատոգրաֆիան՝ որ-

պես արվեստի առավել մասսայական տեսակ՝ քաղաքական և գիտական քարոզչության կարևոր միջոց: Կինոժապավենի հայտնագործումը: Տեխնիկական կատարելագործումը: Կինոնկարների արտադրությունը:

Հայկական կինեմատոգրաֆիայի համառոտ պատմությունը:

Լուսանկարչական ապարատների կառուցվածքը:

Խցիկի բաղկացուցիչ մասերը և ֆունկցիաները՝

- ✓ Նկարահանման սեղմակը,
- ✓ Ֆոտոապարատի լարման մեխանիզմը,
- ✓ Կադրերի հաշվիչը,
- ✓ Արհեստական լույսի տեղադրման և միացման հարմարանքները,
- ✓ Տեսարանաորոշիչը,
- ✓ Ժապավենի հավաքման մեխանիզմը,
- ✓ Ավտոմատ նկարահանման մեխանիզմը,
- ✓ Եռոտանուն միանալու հարմարանքը,
- ✓ Խցիկի միջի փակադակը:

## **ԹԵՄԱ Գ. ՓԱՍՏԱՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Լուսանկարչությունը՝ որպես իրականության արտացոլում, որպես գաղափարների, զգացմունքների և արտահայտման միջոց: Լուսանկարչությունը՝ իբրև իրականությունը ցուցադրող միջոց, լուսանկարչությունը որպես պատմական փաստ: «Ֆիզիկական» իրականություն, անսպասելիի և պատահականի հավերժացումը լուսանկարում: Լուսանկարչության առանձնահատկությունները կերպարվեստի այլ տեսակներից:

Հայոց ցեղասպանությանը վերաբերող լուսանկարների հավաքածուները, մասնավորապես՝ Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրիայի, ԱՄՆ-ի, Նորվեգիայի, Հայաստանի և այլ պետությունների արխիվներում: Դրանցից ամենախոշորը՝ Հայոց ցեղասպանության



թանգարան-ինստիտուտի արխիվի հավաքածու: Հայոց ցեղասպանության ականատեսներից՝ Վիկտոր Պիչմանը, Բողիլ Կատարինեն և Արմին Վեգներն ու վերջիններիս կողմից արված լուսանկարները:

## **ԹԵՄԱ Ե. ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Լուսանկարչության պատմության, լուսանկարչական տեխնիկա և գեղարվեստական լուսանկարչության ձևավորումը և միավորումը մեկ միասնականության մեջ: Արվեստաբանության կայացման գործընթացը: Արվեստագիտական վերլուծությունը, նրա հերթավույերը և մեթոդները: Ձևը, ֆորման և «ֆորմալ» վերլուծությունը: Հարակից գիտությունների դերը արվեստաբանական վերլուծության մեջ: Ձևի և բովանդակության միասնությունը գեղարվեստական լուսանկարում: Գծի և լուսաստվերի համագործակցությունը: Գիծն իբրև գեղարվեստական լուսանկարչության հիմք: Լուսաստվերն իբրև ծավալի, խորության հաղորդման միջոց. ծավալի ընկալումը լույսի միջոցով: Ռիթմը գեղարվեստական լուսանկարչության մեջ. գծային և գունային ռիթմեր:

Լուսանկարչության զարգացման պատմության ուսումնասիրությունը՝ գեղանկարչության հետ փոխհարաբերությունների համատեքստում:

Լուսանկարիչներն ու գեղանկարչական հնարքները: Լուսանկարիչներն ու մոնումենտալ, անշարժ օբյեկտները:

1869 թվականին շվեդ Օսկար Ռեյլանդերի ստեղծած 30 (որոշ աղբյուրներում՝ 32) տարբեր նեգատիվներից համակցված լուսանկարը՝ «Կյանքի երկու ճանապարհները»:

Ռեյլանդերի գործը շարունակող նկարիչ և լուսանկարիչ Հենրի Պիչ Ռոբերտսոնը, որը հայտնի դարձավ իր «Հեռացողը» կամ «Կյանքը մարում է» համակցված լուսանկարի շնորհիվ:

1848 թ. Մեծ Բրիտանիայում ստեղծված Պրեռաֆայելիտների խմբավորումը՝ գեղանկարիչներ Ուիլյամ Հանտի, Դանթե Գարրիել Ռոսսետիի և Ջոն Միլենսի գլխավորությամբ:

Պրեռաֆայելիտներից մի քանի տարի անց Անգլիայում ստեղծված նոր խմբավորում՝ «Բարձր գեղարվեստական լուսանկարի կողմնակիցները»: Արվեստի հայտնի տեսաբան Իպոլիտ Տենի գնահատականի մասին: «Լուսանկարն իրենից ներկայացնում է արվեստ, որը ստեղծվում է գծերի և լուսաստվերի համագործակցությունից՝ ավելի ճշգրտորեն պատկերելով այս կամ այն առարկայի ձևը: Անկասկած, լուսանկարը շատ օգտակար մեթոդ է գեղանկարչության համար, երբեմն այն գեղարվեստական նշանակություն է ստանում փորձառու և ընդունակ մարդկանց ձեռքում, բայց, այնուամենայնիվ, այն չի հավակնում մի հարթության վրա լինել գեղանկարչության հետ»:

1850-ական թվականներից արվեստի ոլորտում փորձառություն ունեցող արվեստագետների ներգրավումը լուսանկարչության մեջ: Բազմաթիվ նեգատիվների համադրմամբ պատկերի ստացումը՝ կոլաժը Օսկար Ռեյլանդերի, Հենրի Պիչ Ռոբերտսոնի ստեղծագործություններում:

19-րդ դարի վերջում ձևավորված միջազգային լուսանկարչական շարժումը՝ «փիքթորեալիզմ» անվամբ: Նրանց հիմնական նպատակը՝ ցուցադրվել արվեստի տարբեր թանգարաններում և իրենց ստեղծագործություններն առանձնացնել սիրողական լուսանկարչությունից:

Փիքթորեալիզմի ներկայացուցիչներն ու իրենց ստեղծագործություններում շեշտը դրած այն հատկանիշները, որոնք լուսանկարը մերձեցնում էին ժամանակաշրջանի գեղանկարի և գծանկարի հետ (տվյալ դեպքում՝ իմպրեսիոնիզմ, պրեռաֆայելիտներ, սիմվոլիզմ, ար-նուվո): Իրենց ցանկալի արդյունքին հասնելու համար նրանց մշակած նկարահանման և տպագրման յուրատեսակ միջոցները: Նրանց կողմից ստեղծված ամենավառ օրինակները՝ դիմանկարնե-

րը, որտեղ լուսանկարիչը թույլ կենտրոնացման (ֆոկուսի) միջոցով ստանում էր խորհրդավոր միջավայր:

Ռուս արվեստագետ, լրագրող և թարգմանիչ Ֆլորենտի Պավենկովի անդրադարձն այն գեղանկարիչների հայտարարություններին, որոնք քննադատում էին լուսանկարչությունը և նրան բնորոշ բազմացման երևույթը՝ ասելով, որ այն խլացնում է իրական արվեստը. «Լուսանկարչությունը մեքենայի հորինվածք է միայն, որ ճնշում է գեղանկարչությանը՝ խլելով նրանից գոյատևելու և հավերժանալու միջոցները»:

Օգյուստ Ռոդենի այն անդրադարձի մասին, որ շարժման մեջ լուսանկարված կերպարներն անհեթեթ տեսք են ունենում, կարծես նրանց մարմնի մասերը մի քանի ակնթարթ ուղղակի կանգ են առել: Ռոդենի այն տեսակետը, ըստ որի՝ երբ ժամանակակից գեղանկարիչներն օգտագործում են ակնթարթային լուսանկարի դիրքերը, հենց այդ ժամանակ էլ կնքում են իրենց դատավճիռը (օրինակ՝ վագոն ձիերի պատկերման համար):

Գեղանկարի և լուսանկարի փոխազդեցությունները:

Գեղարվեստա-արտահայտչական հնարների ընդլայնումը: Լուսանկարչությունից ստացված անմիջական ազդեցության առաջին արձագանքները՝ գեղանկարչության մեջ անսովոր պլանների համադրումը, յուրահատուկ ընտրված դիտակետերը, ժամանակակից կյանքի ռիթմի սուր զգացողությունները և մի շարք այլ առանձնահատկություններ:

Լուսանկարիչներ, որոնք նախկինում գեղանկարիչներ էին՝ Դագեր, Լեգրե, Լեսեկ, Բալդյուս և այլք:

Լուսանկարիչներ, որոնք նախկինում ծաղրանկարիչներ էին՝ Նադար, Կարժա և այլք:

Գեղանկարիչներ, որոնք լուսանկարն օգտագործում էին որպես պատկերագրական աղբյուր կամ իրենց բնորոշ, բնանկարի նախնական ճեպանկար՝ Դելակրուա, Դելարոշ, Կորո, Դեգա և բարբիզոնյան դպրոցի նկարիչներ: Լուսանկարչության ազդեցությունը ռուսական և հայկական գեղանկարչության վրա: Լուսանկարչության ազ-

դեցությունը Ի. Ռեպինի, Մ. Վրուբելի, Ի. Շիշկինի գեղանկարների վրա:

Վարդգես Սուրենյանցի ֆոտոէտյուդները: «Բախչիսարայի շատրվանը» պոեմի գեղարվեստական պատկերագարողման համար ստեղծված ֆոտոէտյուդները: Լուսանկարը՝ որպես հիմք Սուրենյանցի մի շարք գեղանկարների:

## **ԹԵՄԱ Զ. 19-21-ՐԴ ԳԱՐԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՌ- ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Լուսանկարչության մեջ հոգեբանական դիմանկարի ուղղության հիմնադիրներից՝ Գասպար Ֆելիքս Թուռնաշոն կամ Նադարը /1820-1910/: Նա առաջիններից մեկն էր այն լուսանկարիչների շարքում, որոնք սկսեցին օգտագործել արհեստական լույսն իրենց լուսանկարներում: Նա օդագնացության նկատմամբ բուռն հետաքրքրություն ուներ և 1958-ին Փարիզում օդապարիկով թռչելիս հայտնագործեց օդում լուսանկարելու արվեստը: Նադարը՝ իբրև ֆոտոլրագրության հիմնադիր: Առաջինն էր, որ միաժամանակ և՛ լուսանկարում էր, և՛ հարցազրույց էր վարում:

Ալֆրեդ Շթիգլից. պիկտուռեալիզմի մեծագույն վարպետներից մեկը: Առաջին լուսանկարիչը, որի լուսանկարները տեղ գտան ԱՄՆ-ի թանգարաններում՝ հանրահայտ նկարիչների կողքին: Նրա մեծ դերը լուսանկարչության՝ որպես արվեստի անկախ ճյուղի կայացման գործում:

Չուլիա Մարգարետ Քեմերոն. իր աշխատանքներում ձգտում էր մարդու ներաշխարհի կերպարի հաղորդումը տալ լուսագրի միջոցով:

Ռիչարդ Ավեդոն. 20-րդ դարի արվեստի, նորաձևության և քաղաքական գործիչների հավաքական դիմանկարի ստեղծողը:

Աննա Խոյիս. դադաիստական ֆոտոկոլաժի դասական ներկայացուցիչ:

Գորոթեա Լանջ, Արնոլդ Նյումեն, Գրիգոր Կուլերտ, Վլադիմիր Մուսաեյան:

Շիրին Նեշաթ. լուսանկարչուհին մերժում է հակասությունները՝ ավանդույթ-արդիականություն, տղամարդ-կին, Արևելք-Արևմուտք և այլն:

Շադի Ղադիրյան. առաջին լուսանկարչուհիներից մեկն էր, որն իր աշխատանքների միջոցով հերքեց իսլամական աշխարհում կնոջ ունեցած դերի մասին միջազգային պատկերացումները: Ժամանակակից կնոջ սեփական փորձն օգնեց նրան միջազգային հանրությանը ներկայացնել իսլամական կնոջ կերպարը՝ համադրելով կենցաղը և արևմտյան մոտիվները:

## **ԹԵՄԱ Է. ՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐԸ**

Թուրքիայի և Միջին Արևելքի մի շարք երկրների լուսանկարչական արվեստի սկիզբն ու ազգությամբ հայ լուսանկարիչների տեղը և դերը այդ շրջաններում:

Օսմանյան կայսրությունում ամենահայտնի առաջին լուսանկարիչները՝ Աբդուլլահյան եղբայրները՝ Վիչեն (կան աղբյուրներ, որտեղ նշված է Վիզեն), Գևորգ, Հովսեփ: Նրանց համբավը ոչ միայն հայրենի Պոլսում, այլև ԱՄՆ-ում, Եվրոպայում: Սուլթան Աբդուլ Ազիզի պալատական և անձնական լուսանկարիչները:

Ստամբուլի Բերա քաղամասի լուսանկարիչներից՝ Պողոս Թարքույանը (Թարգյուլ), որը հատկապես հմտացել էր դիմանկարներ նկարելու և ձեռքով դրանք ներկելու արվեստի մեջ: Աբդուլհամիդ Երկրորդի պալատական նկարիչներից մեկն էր: Թարքույանը և Մեջլիսի հինգերորդ կարգի շքանշանը: «Ապոլո» և «Ժոայիե» ֆոտոստուդիաները, որտեղ հետագայում մասնագիտանալու էր Ժակ Իսկանդեր հայազգի լուսանկարիչը: Աթաթուրքի հայտնի լուսանկարիչներից՝ Թարքույանը: Առաջին թողարկած 50, 100, 500, 1000 թղթադրամների վրա արտատպված Աթաթուրքի դիմանկարների հեղինակ

լուսանկարչի ստեղծագործական արժևորումը: Աբդուլհամիդի պալատական այլ լուսանկարիչներ՝ Գյուլնեզ եղբայրները (Երվանդ, Արթին, Գրիգոր):

Աշխարհում մեծ ճանաչում ունեցող լուսանկարիչ Արա Գյուլերը: Հենց Գյուլերին է հաջողվել նվաճել «Ստամբուլի աչք» տիտղոսը՝ շնորհիվ Ստամբուլի ամենատարբեր կողմերից բացահայտող նրա լուսանկարների: Գյուլերի ստեղծած լուսանկարները Եվրոպայի և ԱՄՆ-ի բազմաթիվ քաղաքների լավագույն թանգարաններում և պատկերասրահներում (Փարիզի Ազգային թանգարան, Ռոչեստրի «Ջորջ Իստմեն» թանգարան (ԱՄՆ), Նեբրասկայի համալսարանի «Sheldon» հավաքածու, Քյոլնի լուսանկարչական «Das Imaginaire», «Լյուդվիգ» թանգարաններ), ինչպես նաև առանձին անհատների մասնավոր հավաքածուներում:

19-րդ դարի հայ լուսանկարչության նշանավոր դեմքերից՝ Եսայի Կարապետյանը՝ Երուսաղեմի հայկական թեմի պատրիարքը: Եսայի Կարապետյանի գործունեությունը Կոստանդնուպոլսում՝ տվորելու տարիներին: Եսայի Կարապետյանի կողմից 1859 թվականին Քուդուսում հիմնած՝ Միջին Արևելքում առաջին լուսանկարչական դպրոցը: Հակոբա վանքում հիմնադրած լուսանկարչական գործունեությունը: Եսայի Կարապետյանի կողմից ստեղծված Երուսաղեմի հայոց պատրիարքության հոգևորականները: Եսայի Կարապետյանի լուսանկարչությանը նվիրված ձեռագիր դասագիրքն ու վերջինիս կարևորությունը:

## **ՌԵՍԱ Ը. ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԸ 19-ՐԳ ԵՎ 20-ՐԳ ԳԱՐԵՐՈՒՄ**

Հայազգի լուսանկարիչների ձեռքբերումները միջազգային ցուցահանդեսներում: Պարսկաստանում ապրող և ստեղծագործող մեծ վարպետ Անթուան Սևրուզինի գործունեությունը և 1897 թվականին Բրյուսելում ստացած ոսկե մեդալը: Անթուան Սևրուզինը և Փարիզում

նվաճած երկրորդ ոսկին: Պարսկաստանի Նասեր Էդ-Դին շահի կողմից վաստակած «Խան» տիտղոսն ու «Առյուծի և արևի թագավորական ադամանդակուռ» շքանշանը: Անթուան Սևրուզիցի՝ Թեհրանում հիմնադրած լուսանկարչական արվեստանոցը (1883): Նրա հաջողություները և ձեռքբերումները Պարսկաստանում և դրա սահմաններից դուրս: Անթուան Սևրուզիցի՝ որպես Նասեր Էդ-Դին շահի անձնական և արքունական պաշտոնական լուսանկարիչ: Սևրուզիցի լուսանկարչական գործերն աշխարհի բազմաթիվ հեղինակավոր երկրների թանգարաններում:

## **ԹԵՄԱ Թ. 19-21-ՐԳ ԳԱՐԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԸ**

19-րդ դարի վերջերին Կահիրեում աշխատող Լեքեջյանի (Լեքեյան) գործունեությունը և Փարիզում կայացած միջազգային ֆոտոցուցահանդեսի ժամանակ ստացած ոսկե շքանշանը: Լեքեջյանի՝ 1893 թվականին Չիկագոյում կայացած միջազգային ցուցահանդեսում նվաճած «Գրան-Պրի» մրցանակը: Գեղամ Թահվերդյանը 1909 թ. Ռոտտերդամում, ապա 1910 թ. Հռոմում կայացած ինդուստրիալ և ավիացիոն ցուցահանդեսներում ստացած ոսկե մեդալներով:

Կահիրեում առաջին լուսանկարիչներից Լևոն Բոյաջյանի՝ Վան Լեոնի գործունեությունը:

Ազգությամբ հայ լուսանկարիչների փորձարկումներն ու նորարարական հետազոտությունները: Կահիրեում 20-րդ դարի սկզբին առաջին հայ լուսանկարիչներից, որոնք փորձում էին «ստեղծագործ» լուսանկարչական տեխնիկաներ՝ Արմանդը, Արշակը, Թարթան և Արամ Արնավուդյանը՝ Ալբան և այլք:

Հայ լուսանկարիչները եվրոպական ու ամերիկյան երկրներում:

Փարիզում հայտնի հայ վարպետներից՝ Հակոբ Սեմերճյանն իր կենսագրությամբ և ստեղծագործական ուղիով: Հակոբ Սեմերճյանը՝ որպես Ֆրանսիայի լավագույն յոթ լուսանկարիչներից մեկը: Սեմեր-

ճյանի կողմից լուսանկարված անվանի դեմքերը՝ Ֆրանսիայի՝ միմյանց հաջորդաբար երկու նախագահների լուսանկարների վերլուծությունը:

Փարիզում ստեղծագործող հայ վարպետներից՝ Գրիգոր Ճուլյանն իր մասնագիտական դիմանկարով:

Հայտնի և նշանավոր մարդկանց դիմանկարի ժանրում անմահացնող վարպետ՝ Յուսուֆ Քարշ (Հովսեփ Քարշյան): Նրա կողմից հավերժացած անցյալ դարի 100 նշանավոր մարդկանցից 51-ը: Յուսուֆ Քարշը՝ Ուինսթոն Չերչիլի, Սոմերսեթ Մոեմի, Էռնեստ Հեմինգուեյի, Ֆրանկլին ռու Էլիանոր Ռուզվելտների, Ալբերտ Էյնշտեյնի, Պաբլո Պիկասոյի, Ֆիդել Կաստրոյի, Ջոն Բենեդիկտի, Բիլ ռու Հիլարի Քլինթոնների, Շառլ դը Գոլի, Բերնարդ Շոուի, Ալբեր Բամյուի, Ջորջ Պոմպիլիուի, Ժան Կոկտոյի, Մարտին Լյութեր Քինգի, Յուրի Գագարինի, Մայր Թերեզայի, Դալիի, Օդրի Հեբբերնի և ժամանակի շատ այլ հասարակական-քաղաքական գործիչների, դերասանների, երգիչների ռու գիտնականների դիմանկարներով: Քարշի լուսանկարների ինքնատիպությունը՝ խիստ մտածված, համաչափ և հավասարակշռված հորինվածք, դիրքի և դիտակետի ճիշտ ընտրություն:

Յուսուֆ Քարշի աշխատանքները Կանադայի ազգային պատկերասրահի, Նյու Յորքի ժամանակակից արվեստի թանգարանի, Մետրոպոլիտեն արվեստի թանգարանի, Ջորջ Իսթման Հաուզի լուսանկարչության, Կինոյի միջազգային թանգարանի, Ֆրանսիայի ազգային գրադարանի, Լոնդոնի և Ավստրալիայի ազգային պատկերասրահների մշտական հավաքածուների մեջ: Քարշի լուսանկարների ամբողջական հավաքածուն՝ ներառյալ նեգատիվները, տպված նկարները և փաստաթղթերը Կանադայի գրադարաններում և արխիվներում:

